## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԸ**

Արայիկ Խզմալյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

Բրեստ (Բելառուս)
2019 թվականի դեկտեմբերի 8-10-ը

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

ԱՊՀ

- **ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն Հումանիտար համագործակցության և ՀՀՄՀ խորհրդի միացյալ նիստին, ինչպես նաև «Բրեստ-Համագործակցության՝ 2019 թվականի մշակութային մայրաքաղաք» միջոցառման փակման արարողությանը:

Դեկտեմբերի 8-10-ը իմ գլխավորած պատվիրակության հետ, որի կազմում էին՝ Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի տնօրեն Վարդան Մկրտչյանը, դաշնակահար Հայկ Մելիքյանը, նկարչուհի Գայանե Դավթյանը և դերասանուհի Տաթև Մելքոնյանը, մասնակցել եմ Հումանիտար համագործակցության և ՀՀՄՀ խորհրդի նիստին, որտեղ հանդես եմ եկել երկու հիմնական առաջարկություններով՝ կիրառել հիմնադրամի կանոնադրության 8-րդ հոդվածով նախատեսված կառավարման խորհրդի նախագահի ընտրության ռոտացիոն սկզբունքը, ինչը բխում է նաև հիմնադրամի գործունեության տրամաբանությունից և

նպատակներից, ինչպես նաև, Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս. Լավրովի՝ պատմաբանների խորհուրդ ստեղծելու առաջարկին ի պատասխան՝ առաջարկել եմ ամրապնդել և աջակցել արդեն իսկ գոյություն ունեցող գիտության ազգային ակադեմիաներին, պատմության ինստիտուտների ասոցացիաներին այն հիմնավորմամբ, որ նշյալ կառույցը չի սահմանափակում իր գործունեությունը քաղաքական միավորներով և ունի բոլոր հնարավորությունները տալու պատմական իրադարձությունների գիտականորեն օբյեկտիվ գնահատականը: Հարկ է նաև նշել, որ հիմնադրամի կառավարման խորհրդի նախագահը գործում է առանց ռոտացիոն սկզբունքի արդեն ինը տարի: Որոշվեց խնդիրն ընդգրկել 2020թ. հունիսին կայանալիք նիստի օրակարգում: Այնուհետև, մասնակցել եմ «ԱՊՀ մշակութային մայրաքաղաք- Բրեստ» միջոցառմանը, որտեղ ստացել եմ ջութակահարուհի Դիանա Ադամյանի «Համագործակցության դեբյուտներ» մրցանակը:

Մինսկում հանդիպել եմ նաև դեսպան պարոն Ղևոնդյանին, քննարկել Բելառուսում Հայաստանի մշակութային օրերի կազմակերպմանն ուղղված միջոցառումները:

- **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Հայաստանի մշակույթի հանրահռչակում արտերկրում, հայ-բելառուսական մշակութային և բարեկամական կապերի խթանում, ԱՊՀ-ի շրջանակներում համագործակցության խթանում

13.12.2019

Արայիկ Խզմալյան